

## ՈՒՐԱՐՏԱ-ՀԱՅՎԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ժ. Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վերջին տասնամյակներին ուրարտական շրջանի հուշարձանների լայն թափ ստացած պեղումները հնարավորություն ընձեռեցին ոչ միայն վեր հանելու բազմակողմանի զարգացած ուրարտական մշակույթը, այլև բացահայտելու այդ քաղաքակրթության կապերը հին աշխարհի շատ երկրների հետ, ցույց տալու դրա ազդեցությունը հետուրարտական շրջանի ժողովուրդների մշակույթների ձևավորման գործում: Հայաստանի ուրարտական շրջանի քաղաքակրթության անմիջական կրողն ու շարունակողը, բնականաբար, նույն տարածքում ձևավորված հայ ժողովուրդն է: Ուրարտու—Հայաստան ժառանգականության հարցի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեցան հետուրարտական՝ աքեմենյան և հելլենիստական շրջանների հուշարձանների (էրեբունե, Արմավիր, Արտաշատ) պեղումները: Այսօր որոշակիորեն կարելի է նշել ուրարտական մշակույթի ժառանգականության ու ավանդույթների շարունակման մի շարք բնագավառներ, ինչպիսիք են քաղաքաշինությունը, ճարտարապետությունը, շինարարական տեխնիկան, տարազը, թաղման ձևերը, խեցեգործությունը, տորևտիկան<sup>1</sup> և այլն:

Հայտնի է, որ ուրարտական դիցարանը գլխավորող եռյակը Խալդեն, Թեյշեբան և Շիվինին էին, որոնց մշտապես դիմում էին ուրարտական արքաները: Գերագույն աստված Խալդեն, սակայն, բոլոր աստվածներից հզոր էր՝ «Խալդեն իմ զորեղ (է), աստվածների մեջ զորեղ (է)», ասվում է Կողբանցի արձանագրության մեջ<sup>2</sup>: Ուրարտուի արքաների արձանագրությունների մեծ մասն ուղղված էր Խալդեին: Ամենուրեք կառուցվում էին նրան նվիրված մեծ ու փոքր տաճարներ, կանգնեցվում կոթողներ<sup>3</sup>: Ուրարտացիներն իրենց աստվածներին սովորաբար պատկերում էին մարդակերպ<sup>4</sup>: Խալդեի պաշտամունքի գլխավոր կենտրոնն Արդինին (Մուծածիր) էր, որտեղ հիմնականում թագադրվում էին ուրարտական արքաները: Հստ Թոփուզավայի երկլեզվյալ արձանագրության<sup>5</sup> և Սարգոն 2-րդի՝ Աշուրին ուղղված լուսվի-

<sup>1</sup> Տե՛ս Կ. Լ. Оганесян, Архитектура Эребуни, I, Ереван, 1961, էջ 109, Գ. А. Тирация, Урарту и Армения (К вопросу о преемственности материальной культуры), «Вестник общественных наук АН Арм. ССР», 1968, № 2, էջ 17—30, Գ. Ա. Տիրացյան, Ուրարտու և Հայաստան (նյութական մշակույթի ժառանգորդության հարցի շուրջը), «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետև ՊԲՀ), 1978, № 1, էջ 43—60, ժ. Գ. Խաչատրյան, Հայաստանի անտիկ շրջանի պաշտպանական կառույցները, ՊԲՀ, 1987, № 4, էջ 162, 163:

<sup>2</sup> Տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա» (այսուհետ՝ ՀԺՊՔ), հ. 1, Երևան, 1981, էջ 51 (Հ. Կարազոզյանի վերծանությամբ), «Вор Халди могуч среди (всех) божеств могуч», նաև՝ Գ. А. Меликишвили, Урартские глинообразные надписи, Москва, 1960 (այսուհետ՝ УКН), № 89 էջ 194:

<sup>3</sup> Տե՛ս УКН, № 97, 99:

<sup>4</sup> Տե՛ս Բ. Բ. Пиотровский, Ванское царство, Москва, 1959, էջ 223; 226:

<sup>5</sup> Տե՛ս ՀԺՊՔ, թիվ 28, էջ 82—83: Թոփուզավայի արձանագրությունը գտնվել է Ուրմիա լճից հարավ-արևմուտք, լեռներում, Ռևանգուզից Ուշին տանող ճանապարհին: Փորագրված է կրճղի վրա՝ մի երեսին ուրարտերեն, մյուսին ասորերեն:

արձանագրութիւնների, հնարավոր է դառնում վերականգնել այդ ծիսակատարութիւնը: Ըստ առաջինի «Ռուսա (1-ին, մ. թ. ա. 735—713 թթ.— ժե) Սարգուրորդին ասում է. «... Հաստատեց ինձ Ուրզանան հայրական գահին բարձր, արքայական [...] (...), երբ կատարեց աստվածների առջև Ուրզանան տաճարում աստվածների (և) առջև զոհ»: Նորընծա արքան կառուցում է տաճար՝ ի նշան շնորհակալութեան աստվածներից: Այդպես է նաև հինաւրեւելյան մյուս երկրներում: Այնուհետև նա հարձակվում է Ասորեստանի վրա և հաղթելուց հետո Մուծածիրում զոհաբերութիւն է կատարում. «Փողովուրդը արդեն քաղաքում էր, երբ զոհ կատարեցի (և) բոլորը Արդինե (քաղաքին) տրվեցի: Փողովուրդը Արդինե (քաղաքի) հրապարակ լցվեց...»<sup>6</sup>: Մուծածիրի տաճարում հալդեի, Արուբանիի, գերբնական պահապանների, ջուլի, կովի ու հորթի արձանների հետ միասին կային նաև արքաների աստվածացված (հերոսացված) նախնիների՝ Սարգուրի Իշպուինորդու, Արգիշթե 1-ինի և նոր թագադրված ու աստվածացված Ռուսա 1-ինի արձանները:

Խալդեան ոչ միայն աստված էր, այլև «արքա Խալդե»<sup>7</sup>: Ըստ Լուվրում պահվող սուորիստանյան արձանագրութեան՝ մ. թ. ա. 714 թ. Սարգոն 2-րդի՝ Մուծածիրի վրա կատարած հարձակման ժամանակ, խուճապի մատնված քաղաքի բնակիչներն իրենց Խալդե աստծուն են օգնութեան կանչում, մեծ քանակութեամբ զոհեր են մատուցում, նրա գլխին թագավորական թագ դնում և ձեռքն են տալիս արքայական գայիսունը<sup>8</sup>: Խալդեան պատկերվել է առյուծի վրա կանգնած, գահին նստած<sup>9</sup>, հացով լեցուն սեղանի շուրջը<sup>10</sup>, իսկ կրոնական ծիսակատարութիւնների ժամանակ՝ սովորաբար, մարտիկի կերպարանքով: Ըստ արձանագրութիւնների՝ արշավանքից առաջ Խալդեան ոչ միայն օրհնում էր թագավորին, օգնում նրան հաղթանակ տանելու, այլև հաճախ ինքն էր արշավում իր զենքով, գրավում երկրներ<sup>11</sup>, որոնք հետո նվաճում էր նաև թագավորը: Ինչպես օրինակ՝ «Խալդեան արշավեց՝ սեփական զենքին (?) հնթարկեց» (նշվում է երկրի անունը), «... զգետնեց Արգիշթեի առջև»<sup>12</sup> և այլն, կամ Խալդեի փոխարեն թագավորներն էին այդ մեծագործութիւնները կատարում:

Թագավորները հանդես էին գալիս աստվածներով շրջապատված. «Իշպուինե Սարգուրորդին ասում է— Մինուա Իշպուինորդին Խալդեի սպասավորներով (?) շրջապատված (?), նաև աստվածներով բոլոր, երեք եզ (և) երեսուն ոչխար ոչ մեկին [...] շթողեցի (?), (...)»: Վանի նույն արձանագրութեան մեջ ասվում է նաև, որ «Խալդե տիրոջն իր Իշպուինե Սարգուրորդին (և) Մինուա Իշպուինորդին այս դարպասները սարքեցին, (Իշպուինեն) սահմանեց կարգ. — Արևի ամսին տոնախմբութիւն (?) կատարել (?) Խալ-

<sup>6</sup> Լ. Ն. Քիլագով, Ուրարտական արքաների թագադրման արարողութեան մասին, Աշխատութիւններ Հայաստանի պատմութեան պետական թանգարանի, հ. 7, Երևան, 1981, էջ 24—30, Մ. Գ. Հմայակյան, Վանի թագավորութեան պետական կրօնը, Երևան, 1990, էջ 33, 34:

<sup>7</sup> 4 <...> երբ արքա Խալդեին բնակեցրին 5 Ռուսախինելեում <...>: (Հ. Կարգոլոյանի վերծանութեամբ): И. М. Дьяконов, Урартские письма и документы (далее УПД), М.—Л., 1963, № 12, с. 81:

<sup>8</sup> Տե՛ս Բ. Բ. Пиотровский, նշվ. աշխ., էջ 109:

<sup>9</sup> Տե՛ս АИИУ, ВДИ, 1951, № 19:

<sup>10</sup> Տե՛ս Ս. Հմայակյան, նշվ. աշխ., էջ 36, ժան. 39, էջ 107, տախտ. 29 (Սերբարթեֆեի ընծայական թիթեղների վրա):

<sup>11</sup> Այս ներածականին հաճախ նախորդում է «աղոթեցի Խալդ տիրոջը...»: Տե՛ս Գ. Ղուփանցյան, Ուրարտուի պատմութիւնը: Երևան, 1940, էջ 14: Դա, ըստ երևույթին, արշավանքից առաջ թագավորի աստծուն ուղղված հարցումի պատասխանն է, գուշակութիւն, որն ընդունված էր նաև Ասորեստանում:

<sup>12</sup> ՀժՊՔ, թիվ 22, էջ 59, 60 և այլուր:

դեին, Քեյշերսային, Շիվինեին (և) աստվածներին բոլոր», այնուհետև թվարկում է զոհաբերությունների կարգը<sup>13</sup>:

Արգիշթե 1-ինի արձանը Մուծածիրում եղել է «Թագադրված աստղով աստվածության խույրով (և) օրհնող աջ ձեռքով»: Զոհաբերություններ էին կատարվում ոչ միայն աստվածների առաջ, այլև թագավորների: Զոհաբերություններին մասնակցում էր նաև ժողովուրդը, որին բաժանվում էր զոհաբերված անասունների մսից, այսինքն ժողովուրդը մասնակցում էր այդ ծիսակատարության խնջույքին<sup>14</sup>: Վերոհիշյալը վկայում է, որ թագավորները հավասարեցված էին աստվածներին և նրանց հավասար պատիվներ էին ըստանում:

Այս ամենը նման է խեթական պաշտամունքային ծիսակատարություններին ու տոնակատարություններին, որտեղ այն «ուտելիքով» (= «զոհով»), որով կերակրում էին աստվածներին, ուտում և խմում էին նաև թագավորը և ծիսակատարության բոլոր մասնակիցները<sup>15</sup>:

Ծնթադրվում է, որ խեթական «մեծ ժողովի» ծիսակատարության և թագավորական հիմնական սոնալամբությունները եղել են խնջույքը, աստվածներին կերակրելը, հաղորդությունը, ծիսակատարության մասնակիցներին (հյուրերին) հյուրասիրելը: Դա կապված էր անհետացող աստծու խեթական առասպելի հետ, երբ Տելեպինի անհետանալուց հետո «մարդիկ ու աստվածները սկսում են սովից կոտորվել, Արևի Մեծ աստվածը խնջույք է կազմակերպում», որին հրավիրվում էին բոլոր աստվածներն ու մահկանացուները<sup>16</sup>: Դա դիտվել է աստվածների և մարդկանց համատեղ ճաշկերույթ, մարդկանց աստվածների հետ շփվելու հիմնական ձև: Այստեղ խոսքը թագավորի մասին է, որը մասնակցում է բոլոր աստվածների խնջույքին: Դրա հետ է կապված նոր պալատ կառուցելու ծիսակատարությունը<sup>17</sup> (ըստ Վ. Արձինբայի այն արտահայտվում է նաև խուռի-լուվիական ծագում ունեցող մի ազոթքի մեջ):

Նախնիների և թագավորների պաշտամունքի ավանդույթները շարունակվում են Հայաստանում և Կոմագենեում<sup>18</sup> նաև հետուրարտական շրջանում: Կոմագենեում նրանց պաշտամունքը ներկայացված է դամբարան-սրբավայրերում, որոնց թագավորներն իրենց հունարեն արձանագրություններում կոչում են հիերոթեսիոն (hieróthesion): Հստակ թվագրվող այս հիերոթեսիոններն՝ իրենց ստորերկրյա կառույցներով, աղոթելու համար պատրաստված հարթակներով, հելլենիստական ոճի հսկայական քանդակներով ու բարձրաքանդակներով, հունարեն արձանագրություններով, թույլ են տալիս ազելի հանգամանորեն ներկայացնել այդ երևույթը: Բացի այդ Կոմագենեն ու Հայաստանը, լինելով հարևան երկրներ, դարեր շարունակ սերտ փոխհարաբերությունների մեջ են եղել միմյանց հետ և շատ ընդհանրություններ ունեն<sup>19</sup>:

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղը, թիվ 6, էջ 46, УКН, թիվ 27:

<sup>14</sup> Տե՛ս ՀԺՊԲ, թիվ 28, էջ 83, ծան. 4:

<sup>15</sup> Տե՛ս В. Г. Ардзинба, Ритуалы и мифы древней Анатолии, М., 1982, էջ 45: 76 (ссыл. 162):

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 76:

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 77:

<sup>18</sup> Տե՛ս Г. Х. Саркисян, Тигранакерт, М., 1960, էջ 34, той же. Четыре эллинизма в духовной культуре древней Армении, ՊԲՀ, 1976, № 3, էջ 56—57, նույնի, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մոզեսի հորենացին, Երևան, 1966, էջ 23—78, Կ. Տիրացյան, Հելլենիստական նոր կենտրոն Կոմագենե երկրում, գրախոսություն F. Dörner, Th. Goell, Arsameia am Nymphaios, Berlin, 1963, — «Լրաբեր հասարակական գիտությունների», 1969, № 3, էջ 90—96:

<sup>19</sup> Տե՛ս Г. А. Тирациян, Страна Коммагена и Армения, «Известия» АН Арм.ССР, Общественные науки, 1956, № 3, էջ 69—74:

ինչը օգնում է ավելի լավ հասկանալ բուն հայկական նյութը:

Կոմագենեն հիշատակվում է դեռևս խեթական մ. թ. ա. 14-րդ դ. աղբյուրներում Կումմախի անունով<sup>20</sup>, իսկ մ. թ. ա. 8-րդ դ. Սարգուրի 2-րդի ժամանակ մտնում է Ուրարտական պետության կազմի մեջ<sup>21</sup>, Ենթադրվում է, որ այն կարող էր մտած լինել «հայկական սատրապության (13-րդ), այնուհետև Երվանդունիների հայկական պետության կազմի մեջ»<sup>22</sup>: Մ. թ. ա. 3-րդ դ. առաջին կեսին Երվանդունիների մի ճյուղի գլխավորությունը կազմավորվում է Մոփքի և Կոմագենեի միացյալ թագավորությունը, որի Սամոս և Արշամ թագավորները կառուցում են հինգ քաղաք: Դրանցից երկուսը Եփրատի ափին գտնվող Սամոսատը և Արածանիի ափին գտնվող Արսամեա—Արշամաշատը միացյալ թագավորության մայրաքաղաքներն էին<sup>23</sup>: Արշամից հետո Կոմագենեն անջատվում է Մոփքից և ընկնում Սելևկյանների լծի տակ: Մ. թ. ա. 189 թ. Մեծ Հայքի և Մոփքի նման Կոմագենեն նույնպես անկախացավ, սակայն Տիգրան 2-րդի և Արտավազդ 2-րդի ժամանակ Հայաստանի հետ կապերն ավելի սերտացան<sup>24</sup>:

Կոմագենեում հայտնի են մի շարք դամբարան-սրբավայրեր<sup>25</sup>, որոնք հիմնականում իրարից քիչ են տարբերվում: Դրանցից երեքը քաղաքների մոտ են՝ Սամոսատում, Եփրատի և Նիմֆայոսի ափի Արսամեայաներում (այժմյան Գյառղյառ և էսքի Քյաշտա): Սրանք ավելի հին են: Առաջին երկուսը վատ են պահպանվել, երրորդը համեմատաբար ավելի լավ վիճակում է: Ըստ Անտիոքոս 1-ինի (մ. թ. ա. 69—34 թթ.) հունարեն արձանագրության, իր նախնի Երվանդունի Արսամեա-Արշամը<sup>26</sup> (մ. թ. ա. 3-րդ դ. երրորդ քառորդ) կառուցել է այս Արսամեան, որտեղ Անտիոքոսի հայրը՝ Միհրդատ Կալինիկոսը, դամբարան-սրբավայր է հիմնադրել, իսկ Անտիոքոսը մեծացրել ու բարեկարգել է այն, հողեր նվիրել ու վեյածել հոր և որդու համատեղ պաշտամունքի վայրի: Արձանագրության համաձայն դրա հետ առնչվող մի շարք միջոցառումներ է նախատեսվում, այդ թվում զոհասեղանների, արձանների և կոթողների կանգնեցում, քրմերի նշանակում և ստրուկների նվիրատվություն, պաշտամունքային ամենամսյա հավաքների անցկացումը: Դրա համար թագավորը հրատարակել է նաև օրենք, որտեղ սահմանվում է քրմերի խնդիրներն ու պարտականությունները, արձանների խնամքի ու զարդարման, հոր և որդու ծննդյան օրերի ամենամսյա տոնակատարությունների և նրանց ֆինանսավորման, հյուրընկալությունների, երաժշտուհիների և հիոթոդոկների գոյության կարգը<sup>27</sup> և այլն:

Հատուկ այդ առթիվ պատրաստված սալահատակ ճանապարհը, որով շարժվել է թափորը, պտտվելով բարձրանում է բլուրն ի վեր և ավարտվում գագաթի սարահարթը տանող աստիճաններով, որտեղ կառուցված են պաշ-

<sup>20</sup> Տե՛ս ԼժՊՔ, էջ 8, Բ. КИВ, XIX, 11, IV, 38—44, ծան. 2:

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 78, ծան. 16, 17, УКН, թիվ 155, Ե:

<sup>22</sup> Կ. Տիրացյան, Գրախոսություն..., էջ 90:

<sup>23</sup> Տե՛ս Գ. Ա. Տիրացյան, Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. 6-րդ դ. վերջ—3-րդ դ. վերջ), ՊՐԸ, 1981, № 2, էջ 83, Հայ ժողովրդի պատմություն, հ. 1-ին, Երևան, 1971, էջ 512—513, Գ. А. Тирация, Страна Коммагена, էջ 73, 74:

<sup>24</sup> Տե՛ս ԼժՊ, I, էջ 513—514:

<sup>25</sup> Գ. Շլյուսերիժեն նշում է հինգ սրբավայր (Տե՛ս Դ. Шлюмберже, Эллинизированный Восток, Москва, 1985, էջ 44—45), ըստ Յ. Կ. Գյորների՝ 8—9 սրբավայր (E. K. Dörner, Th. Goell, Arsameia am Nymphaios, Istanbuler Forschungen», Bd. 23, 1963, с. 88 и сл.; Կ. Խ. Սարգյան, նշվ. աշխ., էջ 33, ծան. 29):

<sup>26</sup> Տե՛ս Գ. Խ. Սարգյան, նշվ. աշխ., էջ 33:

<sup>27</sup> Տե՛ս Կ. Տիրացյան, Գրախոսություն..., էջ 91—92:

տամուկաբային շինությունները: Ճանապարհն անցնում է լեռան լանջին աղոթելու համար նախատեսված երեք հրապարակների մոտով, որոնք ժայռի վրա պատրաստված աստիճանավոր հարթակներ են՝ շրջապատված քանդակներով, բարձրաքանդակ կոթողներով ու արձանագրություններով: Երկրորդ հարթակում ժայռի մեջ փորված գմբեթաձև առաստաղով ստորերկրյա քառակուսի սենյակ է պատրաստված, որի մուտքը նախասենյակից էր: Երրորդ հրապարակում նույնպես ժայռի մեջ փորված 158 մ երկարության ստորերկրյա աստիճանները մխրճվում են զառիթափի լանջի մեջ: Ենթադրվում է, որ այն անավարտ է մնացել, քանի որ ոչ մի տեղ չի տանում<sup>28</sup>, Ասկայն դա, ըստ երևույթին, ժայռի մեջ մտնող Միհրի պաշտամունքի հետ է կապված: Բարձրաքանդակներով մեծ կոթողները ամրացված են եղել ժայռի մեջ փորված խորշերում: Դրանց բեկորների վրա պատկերված են Միհրը, Անտիոքոսը և վերջինիս հայրը՝ Միհրդատ Կալինիկոսը: Կա նաև մի ամբողջական կոթող, որի վրա պատկերված են Միհրդատը և Հերակլեսը՝ միմյանց ձեռք սեղմելիս:

Միհրի պաշտամունքի հետ առնչվող նյութերի առատությունը կոթողներում, ինչպես նաև Արսամեայում թագավորի ծննդյան պաշտոնակալուն օրվա հարմարեցումը Միհրի հայտնությանը նվիրված տոնակատարություններին, ուր թագավորը հանդես էր գալիս իբրև Միհր, ցույց է տալիս, որ Արսամեայի սրբավայրի գլխավոր աստվածը Միհրն էր, իսկ նրա պաշտամունքը տարածված էր Կոմագենեում<sup>29</sup>, և ըստ երևույթին, ինչպես Հայաստանում, դինաստիայի հովանավոր աստվածն էր:

Դամբարան սրբավայրերից երեքն ավելի հեռու են քաղաքներից, գտնվում են բարձունքների վրա (Կարաթուշ, Սեսյոնք, Նեմրուզ լեռ), որոնք նույնպես կառուցել է Անտիոքոս I-ը: Առաջին երկուսը խոշոր են, սակայն քանդակները ավելի հասարակ են և քիչ: Կարաթուշում ուշագրավ են աստծու և թագավորի ձեռքսեղմումով բարձրաքանդակները և եզրի սյուների վրայի կենդանիների քանդակները, իսկ Սեսյոնքում նստած մարդկանց պատկերները շրջանակված են կենդանիների քանդակներով<sup>30</sup>:

Հիբրոթեսիոններից ամենանշանավորը Նեմրուզ լեռան վրա է, որտեղ պատրաստված երեք հարթակներից հյուսիսայինը զուրկ է հարդարանքից: Ենթադրվում է, որ այն ծառայել է մուտքի համար:

Արևելյանն ու արևմտյանը<sup>31</sup> միանման հարդարանք ունեն: Դրանք քարե հսկայական ֆիգուրներ են՝ կենտրոնում հինգ նստած աստվածներ, որոնցից մեկը կնոջ արձան է՝ երկրի սնող մայր աստվածուհի Արգանդենին, մեկն էլ՝ թագավորը: Շարքը երկու կողմից ավարտվում է արծիվների և առյուծների քանդակներով: Բազմոցների հետևի մասում կան հունարեն, արձանագրություններ: Յուրաքանչյուր հարթակի վրա շարված են եղել մեծ թվով կոթողներ՝ բարձրաքանդակներով և արձանագրություններով, որտեղ պատկերված են Անտիոքոս I-ինի հայրական և մայրական կողմի հերոսացած նախնիները: Ամեն մի կոթողի առջև տեղադրված է եղել զոհասեղան: Արևմտյան հարթակի վրա պատկերված է թագավորը աստծու՝ Արամազդ—Ջևսի, Ապսոլն—Միհր—Հելիոս—Հերմեսի կամ Հերակլես—Արտագնես (Վահագն)—Արեւի ձեռքը սեղմելիս<sup>32</sup>, իսկ հինգերորդի վրա աստղերով զարդարված առյուծ

<sup>28</sup> Տե՛ս Դ. Шлюмберже, ելզ. աշխ., էջ 46:

<sup>29</sup> Տե՛ս Գ. Տիրացյան, Գրախոսություն..., էջ 94:

<sup>30</sup> Տե՛ս Դ. Шлюмберже, ելզ. աշխ., էջ 48, նկ. 34—36:

<sup>31</sup> Տե՛ս Գ. Սարգսյան, ելզ. աշխ., նկ. 2, 8:

<sup>32</sup> Տե՛ս К. Humann and O. Puchstein, Reisen in Kleinasien und Nordsyrien, Berlin, 1890, s. 281 և հա., Taf. XXXVIII, 2, էջ 321; R. Ghirshman, Les Parthians and Sassanians. Thames and Hudson, 1962, p. 57—69, fig. 72—80.

է<sup>33</sup>, որը նշում է նրա պաշտամունքային բնույթը, թագավորի համար երկնային լուսատուների ամենաբարենպաստ դասավորությունը՝ բախտացույցը:

Նեմրուզ լեռան հունարեն արձանագրությունների բովանդակությունը գրեթե նույնն է, ինչ որ մյուս հիերոթեսիոններինը: Այստեղ նույնպես խոսվում է աստվածների հերոսացած նախնիների և Անտիոքոս 1-ինի պաշտամունքի կազմակերպման մասին<sup>34</sup>:

Այսպիսով, Կոմագենեի վերոհիշյալ դամբարան սրբատեղիները՝ իրենց ճարտարապետական կառույցներով, քանդակներով և բարձրաքանդակ կոթողներով, հունարեն արձանագրություններով, ներկայացնում են այդ երկրի պաշտոնական կրոնը, դիցարանը, պաշտամունքային արարողությունները և դրանց կազմակերպիչ իշխող թագավորի դերը: Դա հարուստ ու բացառիկ կարևոր աղբյուր է տեղական կառավարում ունեցող հելլենիստական երկրների հոգևոր ու նյութական մշակույթի ուսումնասիրության համար: Արձանները սինկրետիկ բնույթ ունեն՝ հելլենիստա-իրանական աստվածներ են, Զևս—Արոմազդես, Ապոլոն—Միհր—Հելիոս—Հերմես, Հերակլես—Արտագենես (Վահագն)—Արես, ինչպես նաև Կոմագենե դիցուհին<sup>35</sup>, որը մայր աստվածուհին էր, և ինքը թագավորը, որը ներկայացված է աստվածների շարքում, նրանց հավասար: Միսակարգի հիմնական մասը, վերոհիշյալ խեթականի և ուրարտականի նման եղել է զոհաբերությունը, որն ավարտվել է խնջույքով: Դրան կարող էին մասնակցել բոլոր ցանկացողները: Աստվածների արձանների շարքերից (2) յուրաքանչյուրում կա նաև Անտիոքոս 1-ին թագավորի արձանը, իբրև աստված: Բարձրաքանդակներում նա պատկերված է նաև Զևս—Արամազդեսի, Ապոլոն—Միհր—Հելիոս—Հերմեսի, Հերակլես—Վերեթրագնայի ձեռքը սեղմելիս, կամ աստծուց թագավորական իշխանություն ստանալիս և այլն: Այստեղ ներկայացված է աստվածացվելու և աստվածների շարքում դասվելու թագավորի ձգտումը<sup>36</sup>: Այսինքն՝ Հայաստանում գոյություն ունեցող նախնիների և իշխող թագավորի պաշտամունքը, դրա հետ կապված ծիսական արարողությունները շատ նման են և շարունակվել են Կոմագենեում: Դեռևս Նյումֆայոսի Արսամեայի պեղումների ընթացքում Կոմագենեի նյութական մշակույթին բնորոշ աստիճանաձև պատվանդանների վրա ամրացված բարձրաքանդակներով և արձանագրություններով կոթողներն, ուսումնասիրողները կապեցին ուրարտական արձանագրություն կրող կամ անարձանագիր կոթողների<sup>37</sup> հետ, որոնք կանգնեցված են քարե աստիճանաձև հատուկ պատվանդանների վրա կամ ագուցված են ժայռափոր խորշի մեջ: Հայտնի է, որ կոթող կանգնեցնելու սովորությունը տարածված է եղել նաև անտիկ<sup>38</sup> և միջնադարյան շրջանի Հայաստանում: Ըստ Գ. Տիրացյանի, ուրարտական ազդեցության արգասիք են նաև Արսամեայի (էսկի-Վալե) ժայռափոր կառույցները<sup>39</sup> և այլն: Նույնն են նաև Կոմագենեի և Հայաստանի տարազները՝ թագավորական թաղը, պատմուճանը, վարտիքներն ու մեկնոցները, նախնիների սրագագաթ գլխարկները: Այդ են վկայում Արտաշատից հայտնաբերված Միհրին պատկերող հեծյալի և կանգնած, թևերը կողքերին կանթած

<sup>33</sup> Տե՛ս Ը. Սևոմբեր՝ Նշվ. աշխ., էջ 47, նկ. 31, 32:

<sup>34</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 48—49:

<sup>35</sup> Տե՛ս Գ. Ն. Սարգսյան, Նշվ. աշխ., էջ 29—30:

<sup>36</sup> Տե՛ս Ը. Սևոմբեր՝ Նշվ. աշխ., էջ 48:

<sup>37</sup> Տե՛ս Բ. Dörner, Th. Goelll Arsame'a am Nymphaios, Berlin, 1963, p. 109, 122.

<sup>38</sup> 301, Գ. Տիրացյան, Գրախոսություն..., էջ 94:

<sup>39</sup> Տե՛ս Մովսես Խորենացի, 11, 66:

<sup>39</sup> Տե՛ս Գ. Տիրացյան, Նշվ. աշխ., էջ 94:

տղամարդու կազմե արձանիկները<sup>40</sup>, հեծյալ թագավորի պատկերով կնքադրոշմները, դրամները և այլն: Վերոհիշյալ կանգնած Միհրի արձանն աղբրավում է նեմրուդ լեռան, ինչպես նաև Նիմֆայոսի Արսամեայում գտնված և Իրանում հանդիպող Միհրի արձանների հետ: Հեծյալի և կանգնած հորինվածքով մարդու կազմե արձանիկներն ամենայն հավանականությամբ Միհրի՝ մեզ չհասած պաշտամունքային պաշտոնական կերպարի, մոնումենտալ քանդակների, ազատ ընդօրինակություններ են: Կասկածից վեր է, որ տարազի և զլխարկների այս ձևերը Հայաստանից են անցել Կոմագենին:

Նույնական պետք է լինեին նաև Կոմագենեի և Հայաստանի կրոնական ըմբռնումները:

Հայկական լեռնաշխարհում ուրարտական պետությանը մ. թ. ա. 6-րդ դ. փոխարինեց նույն տարածքում կազմավորված հայ ժողովուրդը<sup>41</sup>: Տվյալ աշխատության նպատակից դուրս է ներկայացնել հայ ժողովրդի կազմավորման պատմությունը<sup>42</sup>, նշենք միայն, որ մ. թ. ա. 9-րդ դ. վերջին և 8-րդ դ. առաջին կեսին Բիսինեյն նվաճում է գրեթե ամբողջ Հայկական լեռնաշխարհը, որտեղ կողք կողքի ապրում էին խուռի-ուրարտական հնդեվրոպական՝ պրոտո հայկական (հայախոս և այլ) ցեղեր: Իր վարած քաղաքականության շնորհիվ Ուրարտական պետությունը կարճ ժամանակում կարողացավ փոխել Հայկական լեռնաշխարհի կերպարը: Նվաճված ցեղերի զանգվածային տեղահանությունների ու գերեվարությունների հետևանքը եղավ այն, որ Հայկական լեռնաշխարհի էթնոսները խառնվեցին իրար: Նրանց մշակույթները ունչացվեցին կամ տեղափոխվեցին այլ հողի վրա: Մարդկանց հետ միասին նոր վայրեր տեղափոխվեցին, հաճախ նաև, աստվածներն ու նրանց պաշտամունքները, ինչպես օրինակ Մարդուկը, Իվարշան, Կուերան տեղափոխվեցին Արարատյան դաշտ՝ էրբունն, Թեյշբաինն, Արգիշթեխինեյն և այլն: Այնուհետև տարբեր ցեղերի ներկայացուցիչներ քանակում ծառայում էին միասին, լինում էին խառնամուսնություններ և այլն: Այս բոլորը նպաստեցին ուրարտական թագավորության տարածքում՝ Հայկական լեռնաշխարհում հայ ժողովրդի ձևավորմանը և նոր նյութական ու հոգևոր մշակույթի ստեղծմանը: Ենթադրվում է, որ արդեն մ. թ. ա. 7-րդ դ. վերջին ուրարտական պետության գլուխ էին անցել հայերը, և ընդհանուր լեզուն հայերենն էր<sup>43</sup>: Ըստ Գ. Ղափանցյանի Արա-Շամիրամ առասպելը հիմնովին ձևավորվել է մ. թ. ա. 7—6-րդ դարերում<sup>44</sup>: Այսինքն ուրարտական պետության թուլացման հետ միասին հայախոս ցեղերը աստիճանաբար սկսում են ուժեղանալ և ավելի մեծ դեր խաղալ երկրի ներքին կյանքում: Հայկական դիցարանի աստվածները համադրվեցին ուրարտական աստվածների հետ: Հայոց աստվածների պաշտամունքը Հայաստանի, Մուշի և Արարատյան դաշտի հնագույն

<sup>40</sup> Տե՛ս Ժ. Խաչատրյան, Իրանահայկական դիցարանական աղբյուրների հարցի շուրջ, «Լրագրեր հասարակական գիտությունների», 1981, № 2, էջ 54—73, նույնի, Գիտությունների կազմե արձանիկների երեք խմբի մասին, Շիրակի պատմա-մշակութային ժառանգությունը, Հանրապետական առաջին գիտաժողով: Զեկուցումների թղթեր, Գյումրի, 1994, էջ 34:

<sup>41</sup> Տե՛ս Կ. Խ. Սարգսյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» և սեպագրական աղբյուրները, ՊՐԸ, 1982, № 2—3, էջ 48:

<sup>42</sup> Այդ մասին տե՛ս Գ. Բ. Գամբրելաձե, Գ. Բ. Իվանով, Индоевропейский язык и индоевропейцы, Т. I, II, Тбилиси, 1984; Բ. Ն. Առաքելյան, Գ. Բ. Զահալյան, Կ. Խ. Սարգսյան, Ուրարտու—Հայաստան, Երևան, 1988, Լ. Կարազյոզյան, Սեպագիր տեղանուններ, «Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում», Կ. 1-ին, Երևան, 1998 և այլուր:

<sup>43</sup> Տե՛ս Լ. Կարազյոզյան, Էջվ. աշխ., էջ 48—49:

<sup>44</sup> Տե՛ս Գ. Ղափանցյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1944 (կազմի վրա 1945), էջ 27:

պաշտամունքների շարունակութունն է<sup>46</sup>։ Դա նշանակում է՝ այդ տարածքներում ապրող հայկական ցեղերն են գլխավորել հայ ժողովրդի կազմավորումը, ուստի թագավորական պաշտամունքի ութ գլխավոր սրբավայրերը այդտեղ են գտնվում, ոչ թե ուրարտացիների բուն տարածքում՝ արևելյան և հարավային շրջաններում։ Մովսես Խորենացին (II, 12, 14) փորձում է դա բացատրել հետևյալ կերպ. երբ Տիգրանը կամեցավ Հունաստանից Արտաշեսի բերած աստվածների համար մեհյաններ կառուցել, դրանց հետ եկած քրմերը, որպեսզի «իրենց Հայաստանի խորքերը չքշեն, սուտ գուշակութուններ հնարեցին, իբրև թե աստվածները հենց նույն տեղում կամենում են բռնակվել»։

Մ. թ. ա. 6-րդ դ. Հայաստանն ընկավ մեղացիների տիրապետության տակ։ Հավանաբար այս շրջանում է Միհրը համադրվել Ուրարտու-հայկական աստվածների հետ։ Այսինքն՝ Միհրն ավելի վաղ է համադրվել Խալդե-Արա-Արեգի հետ, քան ենթադրվում էր։ Իրանագիտության վերջին տասնամյակների հաջողությունները տվել են հետաքրքիր արդյունքներ, որոնք հաստատում են մեր ենթադրությունը։ Պարզվել է, որ պտղոմյանների դինաստիական աստված Սերապիսը մեղական աստված է, որ նրա պաշտամունքը միթրայիզմի կրոնական հնագույն համակարգի մաս է կազմել։ Ինչպես աքեմենյան դինաստիայի հովանավորը Ահուրա-Մազդան էր, այնպես էլ Միհրը մեղացիների դինաստիական աստվածն էր, իսկ Սերապիսը՝ պետության<sup>46</sup>։ Քսանթոսի եռալեզու արձանագրության արամերեն տեքստում իրանական Խշաթրափատի (Xšāθtrapati) էպիտետով անվանվում է աստված, որը համապատասխանում է հունարեն տեքստի Ապոլոնին։ Այստեղ Xšāθtrapati-ն մարմնավորում է Միհրի անձնավորումներից (հիպոստասիսներից) մեկը, որն ընկալվել է որպես պետության աստված<sup>47</sup>։ Ա. Գ. Խ. Բիվարը եզրակացնում է, որ մեղացիների կրոնական ազդեցությունը պրովինցիաներում ավելի ուժեղ է եղել, քան բուն Իրանում։ Քսանթոսի եռալեզու արձանագրությունը դրա ապացույցներից մեկն է, քանի որ քաղաքը վերականգնել է Կյուրոսի գործակից Հարպագը։ Այդպես է նաև Սիրիայում, Հիրկանիայում, Սոգդիանայում և այլուր<sup>48</sup>։ Ըստ երևույթին այդպես էր նաև Հայաստանում, որտեղ իրանական ցեղերը, հատկապես մեղացիները, զգալի թիվ էին կազմում։ Գեռևա Արգիշթե 1-ինի (մ. թ. ա. 786—764 թթ.) օրոք ուրարտական գործերը նվաճեցին Մանան, Մեդիան, էլամի հյուսիսային շրջանները<sup>49</sup>։ Իսկ մ. թ. ա. 7—6-րդ դդ. նրանք սկսել էին Հայաստան թափանցել և մասնակցել են հայ ժողովրդի կազմավորմանը<sup>50</sup>։ Մովսես Խորենացին (II, 38, 46) մար է անվանում նույնիսկ Արտաշես 1-ինին։ Մարական ծագում է վերագրվում նաև մի շարք նախարարական տներին, եթե մանավանդ ընդունենք Ն. Ադոնցի այն կարծիքը, թե Արտաշես 1-ինը սերում է մ. թ. ա. 6-րդ դ. թագավորներից, ապա Միհրի պաշտամունքը ավելի վաղ պետք է թափանցած լինի Հայաստան<sup>51</sup>։

<sup>46</sup> Տե՛ս Ա. Պետրոսյան, Արամի առասպելը հնդեվրոպական առասպելարանության համատեքստում և հայոց ազգածագման խնդիրը, Երևան, 1997, էջ 146։

<sup>47</sup> Տե՛ս А. Х. Бивар, Митра и Серапис, В.ИИ, 1991, № 3; էջ 53—53։

<sup>48</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 57—58։

<sup>49</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 61։

<sup>50</sup> Տե՛ս Հ. Կուրազյոզյան, նշվ. աշխ., էջ 304—305։

<sup>51</sup> Տե՛ս Գ. Տիրացյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և Ստրաբոնի «Աշխարհագրության» մի քանի տվյալներ Հայաստանի ն. մ. թ. 3—2-րդ դարերի պատմության մասին։ Քսանթոսի Մատենադարանի», թիվ 6, Երևան, 1962, էջ 14—16։

<sup>52</sup> Տե՛ս Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, էջ 320—321; 419—420; И. М. Дьяконов, История Мидии, М.-Л., 1956; էջ 353։



Միհրի պաշտամունքը խոր արմատներ է թողել հայ իրականության մեջ<sup>52</sup>: նրա պաշտամունքն ու առասպելը արտացոլվել են նաև հայկական ժողովրդական էպոսի մեջ, ուր Մհերը Միհրն է<sup>53</sup>: Առյուծ Մհերն առյուծ-արևն է: «Սասնա ծռերի» մի քանի պատումներում Ազոսվի քարը<sup>54</sup> սկզբնապես դիտվել է որպես Մեհյան և այլն<sup>55</sup>: Խալդեն, Արան, Արեգը, Ատիսը, Միհրը մեռնող և հարույթուն առնող աստվածներ էին, և նրանք համադրվել են նաև այդ հատկանիշով: Վանի ժայռի «Խալդեի դուռ», որտեղից դուրս էր գալիս Խալդեն, հետորարտական շրջանում դարձավ «Մհերի դուռ», և ժայռի դռնից այժմ դուրս էր գալիս Միհրը<sup>56</sup>: Բ. Բ. Պրոտորովսկին ենթադրում է, որ «Միհրի դուռ»: Միթրեում մեհյան պետք է եղած լինի<sup>57</sup>, Խալդեի տոտեմը՝ առյուծը, նաև Միհրի տոտեմն է<sup>58</sup> և այլն:

Մ. Թ. ա. 6-րդ դ. կեսերին Հայաստանն անցավ աքեմենյանների տիրապետության տակ: Վերջիններիս օրոք տեղի ունեցան տարբեր մշակույթների փոխազդեցություն և միաձուլում, կրոնական հավատալիքների ու ծիսակատարությունների մերձեցում:

Այդ գործընթացը շատ ավելի ակտիվ էր ընթանում հատկապես արևմրտյան Իրանում: Արդյունքը եղավ այն, որ ստեղծվեց «Միասնական աշխարհ», միասնական մշակույթ և միասնական արքունական արվեստ, որի կանոնականացումը նպաստեց միօրինականացմանը: Այդ շրջանում սկսվեց հայկական մշակույթի «իրանացումը»: Հայկական պանթեոնի աստվածները Իրանի հզոր կուլտուր-քաղաքական ազդեցությամբ համադրվեցին իրանականի հետ: Նրանք ստացան նոր անուններ, գուցե նաև որոշ նոր հատկանիշներ: Մ. Թ. ա. 5-րդ դ. վերջերին Անահիտի ու Միհրի պաշտամունքն այնքան էր խորացել ու տարածվել Իրանում, որ Արտաքսերքսես 2-րդի (մ. թ. ա. 405—358 թթ.) օրոք Անահիտն ու Միհրը մտան աքեմենյան դիցարանը գլխավորող եռյակի մեջ և հիշատակվում են Ահուրա Մազդայից հետո: Մեկ աստծու՝ Ահուրա-Մազդային դիմելու ավանդական ձևը փոխարինվում է եռաստվածությանը դիմելու ձևով: Հայաստանում, ինչպես վերը տեսանք, ուրարտական շրջանում եռաստվածությանը դիմելու ձևը կար և ըստ երևույթին այն շարունակվեց նաև հետագայում:

Հավանաբար դրանից հետո սատրապները և նրանց ու աքեմենյան արքունիքի հետ կապված ազնվականները դիմում էին Ահուրա Մազդային և Արտային, իսկ սկսած Արտաքսերքսես 2-րդի ժամանակներից՝ դիցարանի գլխավոր եռյակին՝ Ահուրա Մազդային, Անահիտին և Միհրին: Առաջին երկուսը համադրվեցին տեղական աստվածների հետ: Գավգամելայի ճակատամարտից հետո (մ. թ. ա. 331—330 թթ.) Հայաստանն անկախացավ սատրապ Երվանդի (Օրոնտասի) գլխավորությամբ, որը նույնությամբ ընդունեց աքեմենյանների պաշտոնական (սատրապական) դիցարանը գլխավորող եռ-

<sup>52</sup> Տե՛ս Թ. Ավդալբեգյան, Միհրը հայոց մեջ՝ «Հայագիտական հետազոտություններ», Երևան, 1969, էջ 13—29:

<sup>53</sup> Տե՛ս Մ. Ա. Օրբելյ, Армянский героический эпос, Ереван, 1956, էջ 120—127: Թ. Ավդալբեգյան, նշվ. աշխ., էջ 43:

<sup>54</sup> Տե՛ս Կ. Մելիք-Օհանջաճյան, Միթրո-Միհրը Սասնա ծռերի մեջ, «Գրական-բանասիրական հետախուզումներ», գիրք Ա, Երևան, 1948, էջ 305—306:

<sup>55</sup> Այդ մասին տե՛ս Ժ. Խաչատրյան, Իրանա-հայկական դիցաբանական..., էջ 84—73:

<sup>56</sup> Տե՛ս Ս. Հմայակյան, նշվ. աշխ., էջ 36:

<sup>57</sup> Տե՛ս Բ. Բ. Пнотровский, История и культура Урарту, Ереван, 1944, էջ 140—142:

<sup>58</sup> Տե՛ս Մ. И. Дьяконов, К вопросу о символе Халди, «Древний Восток», № 4, Ереван, 1983; էջ 190—194:

յակին՝ Ահուրամազդային, Անահիտին և Միհրին<sup>59</sup>։ Երբ անտիկ հեղինակները և հայ վաղմիջնադարյան պատմիչները խոսում են հայերի հավատալիքների մասին, հիմնականում նշում են Արամազդին, Անահիտին ու Միհրին<sup>60</sup>։

Խորենացին (2-րդ, 8, 77) վկայում է, որ Վաղարշակը «Արմավիրում մեհյան շինելով՝ արձաններ է կանգնեցնում արեգակին, լուսնին և իր նախնիներին»։ Այս վկայությունը հավանաբար վերաբերում է նախաքրիստոսյան շրջանին<sup>61</sup> մինչև հայկական աստվածները իրանականի հետ համադրվելը։

Հելլենիստական շրջանում հայկական դիցարանի աստվածները համագրվում են նաև հունական աստվածների հետ, և նրանք հանդես են գալիս հայկական - իրանական - հելլենական անուններով, Հայկ<sup>62</sup>—Արամազդ—Ջևս (Դիոս), Արեգ—Միհր—Ապոլոն—Հելիոս—Հերմես, Լուսին—Անահիտ—Արտեմիս, Նանե—Աթենաս, Վահագն—Հերակլես, Աստղիկ—Ափրոդիտե<sup>63</sup> և այլն։ Հունաստանից և Փոքր Ասիայից հունական աստվածների արձաններ են բերվում և կանգնեցվում տաճարներում հավանաբար մ. թ. ա. 3-րդ դ. կեսերին։

Սակայն հայկական աստվածների մեհյաններում մինչև այդ էլ եղել են «ճարտար ձեռքերով սարքված» փայտե, քարե, պղնձե, արծաթե, ոսկե արձաններ<sup>64</sup>, Դրանք տարբեր շափերի էին։ Մեծերն ունեցել են 6—8 մ բարձրություն։

Համաձայն Մովսես Խորենացու (2-րդ, 40), Երվանդ վերջինը մայրաքաղաքը Արմավիրից տեղափոխեց Երվանդաշատ, սակայն աստվածների և նախնիների կուռքերի համար կառուցեց մի այլ քաղաք՝ Բագարանը, որտեղ մեհյաններ կառուցեց և կանգնեցրեց Արեգ—Միհր—Ապոլոնի, Լուսին—Անահիտ—Արտեմիսի և նախնիների կուռքերը։ Բագարանում նույնպես Արմավիրի նրման կատարվում էին գուշակություններ, և զբաղվում էին երազահանությունամբ<sup>65</sup>, Այստեղ Երվանդը քրմապետ է նշանակում իր եղբայր Երվազին<sup>66</sup>, Ելնելով Երվանդաշատից հետո կառուցված Արտաշատի և Վաղարշապատի օրինակից՝ կարելի է ենթադրել, որ Երվանդաշատում նույնպես եղել են Արմավիրի նման Միհրին, Անահիտին ու նախնիներին նվիրված տաճարներ, իսկ Բագարանը եղել է հիերոթեատրն։ Դրա օգտին է խոսում նաև Մովսես Խորենացու այն վկայությունը (II, 66), որ Տիգրան վերջինը «... պատվել է իր եղբոր՝ Մաժան քրմապետի գերեզմանը Բագարանում՝ Բագրևանդ զավա-

<sup>59</sup> Տե՛ս Ժ. Խաչատրյան, Իրանա-հայկական դիցարանական աղբյուրների հարցի շուրջ, էջ 62, 9. Տիրացյանը ենթադրում է, որ այն ձևավորվել է Երվանդունիների անկախանալուց հետո. I. Тирация, Вопросы преемственности официального культа в античной Армении, (129, 1985, թիվ 10, էջ 60)։

<sup>60</sup> Այդ մասին տե՛ս К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении (II в. до н. э.—IV в. н. э.), М.-Л., 1953, էջ 78։

<sup>61</sup> Ըստ Մովսես Խորենացու, Կյուրոս Մեծի ժամանակակից, Հայաստանի սատրապ Թանաթարեսը դարձել է Վաղարշակ և մ. թ. ա. 535 թ. տեղափոխվել մ. թ. ա. 2-րդ դ. կեսեր։ Տե՛ս Մ. Ս. Օհանյան, Մար Արաթյան աղբյուրի ծագումը և Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», ՊՐՀ, 1996, № 1—2, էջ 295—310։

<sup>62</sup> Եվսերիոսի հուշարեն տեքստում և դրա 5-րդ դ. հայերեն թարգմանության մեջ նշված է Բել, որին հույները անվանում են Ջևս, հայերը՝ Արամազդ, բայց այն Հայաստանում պետք է համադրվեր հին Հայկի հետ։ Տե՛ս К. В. Тревер, նշվ. աշխ., էջ 80, 89։

<sup>63</sup> Տե՛ս Ագաբաևզեղոս, § 778, 784—786, 789, 790, 809, Բուզանդ, 3-րդ, 14, Խաբենացի, II, 12, 14, 49, 54։

<sup>64</sup> Տե՛ս Ագաբաևզեղոս, 59, 71, 73, Խաբենացի, 2-րդ, 12, Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարսուսի, Երևան, 1941, էջ 79, 97, 98։

<sup>65</sup> Տե՛ս Ժ. Խաչատրյան, Գուշակության արվեստի և դրա ժառանգականության հարցի շուրջ (մ. թ. ա. 3-րդ դ.—մ. թ. ա. 4-րդ դ.), «Իրան-Նամե», 1996, թիվ 4—5, էջ 46—47։

<sup>66</sup> Տե՛ս Մովսես Խորենացի, II, 40։

ուում, գերեզմանի վրա բազին շինելով, որպեսզի այդտեղի զոհերից վայելեն բոլոր անցորդները և հյուրերը ընդունվեն գիշերելու համար: Հետո վաղարշն, այդ տեղում ժողովրդական տոն սահմանեց նոր տարվա սկզբին, նավասարդի ամսագլխին»: Պարզապես Մովսես Խորենացին յուրովի է մեկնաբանում այն:

Մագնեսիայի ճակատամարտից հետո Մեծ Հայքն անկախ հռչակելով՝ Արտաշես 1-ինը իրեն հայտարարեց Երվանդունիների ազգականը և նույնությամբ ընդունեց նրանց պաշտոնական գիցարանը: Հայաստանի նոր մայրաքաղաք Արտաշատը Արմավիրի նման դարձավ նաև կրոնական կենտրոն: Ըստ Մովսես Խորենացու (2-րդ, 49), Արտաշեսը Արտաշատում Մեհյան կառուցեց (6-րդ բլուր) և Բագարանից այնտեղ փոխադրեց Լուսին—Անահիտ—Արտեմիսի արձանը և բոլոր հայրենական կուռքերին, իսկ Արեգ—Միհր—Ապոլոն—Հելիոսի արձանը կանգնեցրեց քաղաքից դուրս՝ ճանապարհին, իբրև Հերմես:

Տրդատ 1-ինի օրոք Տիրը համադրվեց Արեգ—Միհր—Ապոլոն—Հելիոս—Հերմեսի<sup>67</sup> հետ և նրանց սրբատեղիում ավելացվեց նոր տաճար կամ, որ ավելի հավանական է, նույն տաճարում կանգնեցվեց նաև Տիրի արձանը, և Ապոլոնի տաճարը (սրբատեղին) կոչվեց նաև Տիրի<sup>68</sup> անունով: Գուշակութուններ և երազահանութուն էր կատարվում նաև Արտաշատի Արեգ—Միհր—Ապոլոն—Հերմես—Տիրի տաճարում<sup>69</sup>:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, դինաստիայի պաշտամունքի հետ կապված հայկական դիցարանի աստվածները Կոմագենեի նման ունեին սինկրետիկ բնույթ: Հայաստանի գլխավոր կրոնական կենտրոններում՝ Արմավիրում, Բագարանում, Արտաշատում, Ուրարտուի և Կոմագենեի նման միևնույն տաճարում աստվածների արձանների հետ միասին եղել են նաև թագավորական նախնիների, հնարավոր է նաև իշխող թագավորի արձանները: Վերջինիս մասին խոսում է Մովսես Խորենացին՝ Արշամ թագավորի հետ կապված. «և երկիր պագանել արեգական և պաշտել զկուռս արթայի...»<sup>70</sup>: նախնիների և թագավորի պաշտամունքը կատարվել է աստվածների պաշտամունքի հետ միասին:

Ըստ Մովսես Խորենացու Արմավիրում, Բագարանում, Արտաշատում նախնիների արձաններ եղել են Արեգ—Միհր—Ապոլոնի և Լուսին—Անահիտ—Արտեմիսի տաճարներում: Լուսին—Անահիտը Հայաստանի և Արտաշատի, իսկ Արեգ—Միհր—Ապոլոնը Արտաշեսյանների և Արշակունիների հովանավորն էր: Արտաշես 1-ինը (մ. թ. ա. 190—160 թթ.) Թեղուտի և Զանգեզուրի արձանագրություններում իր ընդարձակ տիրոջոսաշարում իրեն անվանում է «թագակիր», «հաղթական», «իշխանությամբ օժտված»: Այս էպիտետը Քսանթոսի եռալեզու արձանագրության (հունարեն, արամեերեն, լիկիերեն) հետ համեմատելով Վ. Լիվշիցը բացատրում է որպես Միհր—Ապոլոնի հովանավորության տակ գտնվող<sup>71</sup>:

<sup>67</sup> Տե՛ս Ս. Մ. Կեղաշաբույան, Եվս մի անգամ Քառնի հունարեն արձանագրության մասին, ՊՔՀ, 1965, № 3, էջ 236:

<sup>68</sup> Agathangelus und die Akten Gregors Armenien («Neue herausgegeben von Paul de Lagarde»), Göttingen, 1887, s. 65, 22.

<sup>69</sup> Տե՛ս Փ. Խաչատրյան, Գուշակության արվեստի..., էջ 46—47:

<sup>70</sup> Մ. Խորենացի, II, 24, Գ. Խ. Ստրգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը, էջ 45:

<sup>71</sup> Տե՛ս В. А. Лившиц, Трилингва из Ксанфа и надписи Артаксия, VIII всеобщая конференция по древнему Востоку, посвященная памяти академика В. В. Струве, Тезисы докладов, М., 1979, էջ 54—55: «Արտաշես, արթա, Երվանդական, արգի

Հին Արևելքում թագավորական իշխանությունը սրբազան էր, աստվածների կողմից տրված: Թագավորին ընդունում էին որպես աստված, աստծուց ծնված, որը մահվանից հետո հեռանում էր աստվածների մոտ, հանդիսանում էր միջնորդ աստվածների ու մարդկանց միջև և այլն<sup>72</sup>: Ուրարտական արքաներն իրենց թագավորությունը ստանում էին հալդիից Մուծածիրի տաճարում: «Երբ հալդե աստվածն Արգիշթե Մինուայրդուն արքայություն տվեց, բազմեց նա իր հոր տեղը (գահին)»<sup>73</sup>: հալդեի այս դերը հետուրարտական Հայաստանում ստանձնել է Միհրը: Ըստ Միթրայաշտի (10, 65), Միհրը պարգևում է իշխանություն, զավակներ, կյանք և հանդիստ գություն<sup>74</sup>: Կարելի է ենթադրել, որ և՛ Երվանդունիներին, և՛ Արտաշեսյաններին, և՛ Արշակունիներին Միհրն է թագավորություն տվել: Այս առումով ուշագրավ է, որ Որմիզդ—Արտաշիր Սասանյանը Հայաստանի թագավոր եղած ժամանակ (264—272 թթ.) մինչև 273 թ. իր կտրած դրամների վրա «Հայոց մեծ արքա» տիտղոսով է, Բ երեսի ինվեստիտուրայի տեսարանում իշխանության պսակը ստանում է Միհրից: Միհրն արքայից արքայի տարագով է, գլխի շուրջը՝ ճառագայթաձև պսակով<sup>75</sup>, ինչպես Կոմագենեում, որը նրա տարբերիչ հատկանիշն է: Դա եզակի պատկեր է, որտեղ Միհրն է թագավորության նշանը հանձնում թագավորին, որովհետև և՛ Շապուհը, և՛ Որմիզդից հետո Վարահրանը իշխանությունն ընդունում են Ահուրա-Մազդայից<sup>76</sup>, ինչպես Աքեմենյանների ժամանակ, և ճիշտ է Վ. Լուկոնինը՝ Որմիզդը Հայաստանի թագավոր էր, և դա կարող էր լինել Հայաստանի ուշ հելլենիստական ավանդույթների արտահայտությունը<sup>77</sup>: 273 թ. մարտից հետո Իրանի Շահնշահ դառնալու արքայության նշանը նրան հանձնում է Անահիտը՝ Ահուրա-Մազդայի ատամնավոր գլխարկով, երկար հագուստով<sup>78</sup>: Միհրը թեև կապված է լույսի հետ, սակայն ասվում է, որ նա «առաջին աստվածն էր, անմահ արագավազ ձիով սլացող արևին մոտեցող»<sup>79</sup> (Յաշտ. 10, 13): Ստրաբոնը վկայում է, որ Աքեմենյանների տիրապետության ժամանակ Արմենիայի սատրապը պարսից արքային ուղարկում էր տարեկան 20000 մտրով՝ միհրական տոների համար<sup>80</sup>: Քսենոփոնը<sup>81</sup> ավար վերցրած իր ծեր ձին նվիրում է «գեղջավազին», որպեսզի նա զոհաբերի Հելիոսին: Վերոհիշյալը

Ջարեհի, Բարի, Թագակիր, խաթրայի դաշնակից, հաղթական»: A. Perikhanian, Les Etudes Arméniennes, 1971, T. VIII, էջ 171; Г. А. Тирация, Еще одна Арамейская надпись Арташеса I, царя Армении, ВДН, 1980, № 4, էջ 102:

<sup>72</sup> Տե՛ս Ի. Բ. Բейнберг, Человек в культуре древнего Ближнего Востока, М., 1986, էջ 115—140; В. Г. Ардзинба, նշվ. աշխ., էջ 55:

<sup>73</sup> УКН, 128, АЗ; У. Գ. Հմայակյան, նշվ. աշխ., էջ 75:

<sup>74</sup> Տե՛ս Մ. Դрезден, Мифология древнего Ирана (пер. И. М. Стреблин-Кэменского), Мифология древнего мира, М., 1974, էջ 350:

<sup>75</sup> Տե՛ս В. Г. Луконин, Культура сасанидского Ирана, Иран. в III—V вв., М., 1969, էջ 101—103, հղում 3; Р. Фрай, Наследие Ирана, էջ 136:

<sup>76</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>77</sup> Տե՛ս Ի. Բ. Բейнберг, նշվ. աշխ., էջ 147, Գործ 1 ասում է. «Ահուրա-Մազդան տվեց ինձ այս թագավորությունը, Ահուրա-Մազդան օգնեց ինձ, որպեսզի ես տիրանամ այս թագավորությանը: Ահուրա-Մազդայի կամքով այս թագավորությանը ես տիրում եմ»: Хрестоматия по истории древнего Востока, М., 1978, 2. էջ 24, Թ. Մանասեյան, Հայաստանը Արտաշատից մինչև Տրդատ Մեծ, Երևան, 1997, էջ 127—129:

<sup>78</sup> Տե՛ս В. Г. Луконин, նշվ. աշխ., էջ 102, 103, 106:

<sup>79</sup> Տե՛ս Մ. Դрезден, նշվ. աշխ., էջ 350:

<sup>80</sup> Տե՛ս Str., XI, IV, 9.

<sup>81</sup> Տե՛ս Քսենոփոն, Անաբասիս, (Թարգմ. Ս. Կրկաշարյանի), Երևան, 1970, IV, V, 35 (էջ 98, ծան. 26):

նույնպես վկայում է, որ Միհրը արդեն մ. թ. ա. 5—4-րդ դդ. համադրվել է Արևի հետ:

Արտաշեսյանների (հնարավոր է նաև Երվանդունիների) թագի վրա պատկերված են արևի երկու կողմերում կանգնած արծիվներ, իսկ Արտավազդի դրամի վրա պատկերված է քառաձի կառք՝ Արև Միհրի խորհրդանիշը<sup>82</sup>: Դա արևի հնդեվրոպական խորհրդանիշն էր: Խեթերի մոտ արևի աստվածը քառաձի կառքով շրջագայում էր երկնակամարով, որը երկրի շրջա կողմը շրջելու նշան էր<sup>83</sup>:

Ռշտունյաց նախարարության նահապետ Բարդափրանը երդվում է արեգակով, լուսնով և իրենց բոլոր երկնային պաշտելիքներով, նաև Արտաշեսի և Տիգրանի արևով<sup>84</sup>: Մեր կարծիքով այդ նշանակությունն ունի նաև Գառնիի հունարեն արձանագրության սկզբի «Հելիոս» բառը: Հելիոս (Արև)—Ապոլոն—Միհր աստվածն է, Տրդատն աստվածացվելով՝ նույնացվել է այդ աստծու հետ, որը Գ. Սարգսյանը<sup>85</sup> կապում է թագավորի և դինաստիայի պաշտամունքի հետ: Միհրը «արքա հալդեի» նման հզոր «արքա Միհր» էր: Միհրի ազդեցությունը դեռևս 5-րդ դ. այնքան մեծ էր, որ քրիստոնյա եպիսկոպոսներն իրենց ճառերում աշխատում են ժխտել Միհրի հզորությունը, կասկած են հայտնում, որ «Միհր աստվածը մարդկային մոր ծնունդ էր և աստվածազավակ թագավոր»<sup>86</sup>:

Այս բոլորը ցույց է տալիս, որ Կոմագենեի նման Միհրի պաշտամունքը լայն տարածում ուներ Հայաստանում, և նա զլխավոր աստծու շատ հատկանիշներ ուներ: Միհրի անվան ամենահին հիշատակությունը հանդիպում է Արմավիրի թիվ 4 հունարեն արձանագրության մեջ (մ. թ. ա. 3-րդ դ. վերջ—210—209 թթ. ոչ ուշ), իբրև «Արմավիրցիների թագավորի» անուն<sup>87</sup>, որը նույնացվում է Մովսես Խորենացու (2-րդ, 40) հիշատակած Երվանդի եղբայր քրմապետ Երվազի հետ: Դա պատահական չէ, քանի որ անկախությունից (մ. թ. ա. 331—330 թթ.) հետո Հայաստանի առաջին մայրաքաղաքն Արմավիրն էր, այնտեղ էր Վաղարշակի «հիմնադրած» առաջին տաճարը, քանի որ այն նաև կրոնական կենտրոն էր (տաճարային քաղաք):

2. Մանանդյանի մեկնաբանությամբ «Արմավիրցիների թագավոր Միթրասը<sup>88</sup> բարև է ուղարկում Երվանդ թագավորին: Արմավիրցիների թագավոր Միթրասը ցանկություն է հայտնում, որ առողջ լինի ինչպես ինքը՝ Երվանդը, նույնպես և նրա սերունդը և թագավորն իր թագավորությունը բոլորե բարեհաջող կերպով»<sup>89</sup>: Ա. Ի. Բոլտուլովան գտնում է, որ դա մ. թ. ա. 2-րդ դ. երկրորդ քառորդից մինչև մ. թ. 120 թ. հանդիպող հելլենիստական նամակի<sup>90</sup> բնորոշ ձև է՝ բարեմաղթանքի հայտնի ձևակերպումով:

4. Վ. Տրեբերը իրավամբ գտնում է, թե քիչ է հավանական, որ զլխավոր քուրմը կրում է ուղղակի աստծու՝ Միհրի անունը, և նշում, որ դա նման

<sup>82</sup> Տե՛ս Կ. Վ. Թրեբեր, նշվ. աշխ., էջ 93:

<sup>83</sup> Տե՛ս Վ. Գ. Արձանոս, նշվ. աշխ., էջ 24:

<sup>84</sup> Տե՛ս Մովսես Խորենացի, II, 19:

<sup>85</sup> Տե՛ս Կ. Վ. Թրեբեր, նշվ. աշխ., էջ 205, Գ. Խ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 55, 58—59:

<sup>86</sup> Տե՛ս Եզդիշ Վարդանանց պատմությունը (թարգմ. և ծան. Ե. Տեր-Մինասյանի), Կրևան, 1958, III, էջ 36:

<sup>87</sup> Տե՛ս 2. Մանանդյան, Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Երևան, 1946, էջ 18—21:

<sup>88</sup> Տե՛ս Գ. Տիրացյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և Ստրաբոնի «Աշխարհագրության» մի քանի մայրեր, էջ 16—17:

<sup>89</sup> 2. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 19, Կ. Վ. Թրեբեր, նշվ. աշխ., էջ 135:

<sup>90</sup> Տե՛ս Ա. Մ. Բոլտուլովա, Греческие надписи Армавира.—Известия Армянского филиала АН СССР, Ереван, 1942 № 1—2, էջ 50—51, հղում 3:

առաջին դեպքն է Հայաստանում: Արձանագրութեան թերի լինելը խանգարում է իմաստավորված թարգմանությունը, ուստի նման եզրակացությունը կասկածելի է համարում<sup>91</sup>: Կ. Տրեբերը ենթադրում է, որ դա ևս կարող է որպես գուշակություն բերված լինել ինչ-որ տարածում գտած գրական ստեղծագործությունից՝ բարեհաջող թագավորելու և առողջ լինելու մասին<sup>92</sup>: Մենք միանում ենք Կ. Վ. Տրեբերի այն կարծիքին, թե անհավանական է, որ Միհրը լինի քրմապետի անունը: Նա ճիշտ է նաև, որ արձանագրությունը գուշակություն կարող է լինել: Ըստ որում, գուշակությունը կատարվել է Միհրի պատգամարանում, որը նաև Երվանդունիների հովանավորն էր: Համոզիչ չէ նաև այն, որ «Արմավիրցիների թագավոր Միհրը» Երվազն է: Նախ մեզ հայտնի չէ, որ Արմավիրի գլխավոր քուրմը եղել է Երվազը: Եթե լիներ անգամ, Մովսես Խորենացին (II, 40, 48) չի նշում արձանների հետ Երվազին տեղափոխելու մասին, այլ ասում է, թե Երվանդը «Բագարանում իր Երվազ եղբորը քրմապետ նշանակեց»: Այն կարող էր լինել Երվանդի եղբայրներից մեկ ուրիշը: Բացի այդ, միշտ չէ, որ քրմապետը լինում էր թագավորի եղբայրը կամ ազգականը: Նույն Բագարանում Սմբատը Երվազի փոխարեն նշանակում է «... մի երագահան մոգի աշակերտի, որը մտերիմ էր Արտաշեսին» (II, 48): Այսինքն, այս արձանագրության մեջ այդ գուշակություն բարի մաղթանքները պետք է արվեր թագավորություն տվող աստծու՝ Միհրի անունից: Դժվար թե քրմապետը, որպես արքա, իբրև հավասարը հավասարին դիմեր Երվանդ թագավորին: Միհրի գուշակությունը բարի մաղթանքների ձևով նորից շատ նման է ուրարտական արքաների խաղերից բարի մաղթանքներին, ինչպիսիք հայտնի են մի քանի արձանագրություններից<sup>93</sup>: Այդպիսի երկու արձանագրություն հայտնի է հենց Արմավիրից. «Թող լինի՝ խաղերի կողմից, խաղյան դարբանների կողմից Սարգուրե Արգիշթորդուն ողջություն, մեծություն [...] առնական (?) գորություն, ուրախություն, սանիթե [...] ուր օրեր երջանիկ (և) ուրախ, սիրացուն: Սարգուրեն արքայություն արևի տակ [...] հաստատեց զօրեղ՝ երկրների վրա հեռավոր (?)»<sup>94</sup>: Այսինքն՝ Արմավիր բլուրը Արգիշտիի ինիլիի պաշտամունքային հատվածն էր, և այնտեղ կատարվել են գուշակություններ, որոնք շարունակվել են ավանդաբար նաև հետուրարտական շրջանում:

Թագավորի նախնիների և իշխող տիրակալի պաշտամունքին նվիրված իր աշխատության մեջ Գ. Խ. Սարգսյանն ասում է, որ թեև Մովսես Խորենացին նշում է միայն երեք կենտրոն, երկուսը մայրաքաղաքում՝ Արմավիրում, Արտաշատում, մեկը՝ Բագարանում, սակայն պետք է լինեն ավելին: Մովսես Խորենացու վկայությունը՝ արձանները Արմավիրից Բագարան և Բագարանից Արտաշատ տանելու մասին, նա հարմարեցված է համարում և գտնում, որ զուգահեռաբար գոյություն է ունեցել երեք սրբավայր<sup>95</sup>: Մենք ժամանակին ստարկել էինք այս տեսակետի դեմ, սակայն այժմ նոր տե-

<sup>91</sup> Տե՛ս Կ. В. Тревер, *նշվ. աշխ.*, էջ 86, տե՛ս նաև Գ. Х. Саркисян, Тигранакерт, Москва, 1960), էջ 39—41, Ս. Մ. Կրկաշադյան, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության գրվագներ, Երևան, 1970, էջ 130—137:

<sup>92</sup> Տե՛ս Կ. В. Тревер, *նշվ. աշխ.*, էջ 137: Պեսիևսում և Հոռոմում Կիրեայի տաճարի քրմապետը կոչվել է Ատիս: Ենթադրվում է, որ ամենամյա տոնակատարությունների ժամանակ նա հանդես է եկել Ատիսի դերում. տե՛ս Ջ. Ջ. Յրեգեր, Ոսկե ճյուղը, Երևան, 1939, էջ 416: Եթե համաձայնվենք անգամ, որ Արմավիրի քրմապետի անունը եղել է Միհր, միևնույն է, դա չի հակասում վերն ասվածին, նա պետք է գուշակության պատասխանը տար Միհրի անունից:

<sup>93</sup> Տե՛ս ՀժՊՔ, 1-ին, թիվ 2, 6 (էջ 40, 46 Վ.ս.), УКН, № 93—95, 226 (Արճեշից):

<sup>94</sup> УКН, № 172, տե՛ս նաև № 171: Վերծանությունը ուրարտագետ Լ. Մ. Կարազյոզյանի:

<sup>95</sup> Տե՛ս Գ. Խ. Սարգսյան, *նշվ. աշխ.*, էջ 44—45:

սանկյունից նայելով խնդրին<sup>96</sup> գտնում ենք, որ Գ. Խ. Սարգսյանը ճիշտ է: Երվանդ վերջինը, հավանաբար, նոր սրբատեղի է կառուցել Արեգ—Միհր—Ապոլոն—Հելիոսի, Լուսին—Անահիտ—Արտեմիսի և իր նախնիների համար, ինչպես Արտաշեսը հետագայում կառուցեց Արտաշատում, իսկ Վաղարշակը, հավանական է, Վաղարշապատում: Ինչպես գրավոր աղբյուրները, այնպես էլ հնագիտական պեղումները վկայում են, որ Վաղարշապատում եղել են Լուսին—Անահիտ—Արտեմիսին<sup>97</sup> (միջնաբերդում, մայր տաճարի տեղում) և Արեգ—Միհր—Ապոլոնին (քաղաքից դուրս, Հռիփսիմեի տաճարի տեղում) նվիրված տաճարներ<sup>98</sup>: Չնայած Մովսես Խորենացու վկայությանը՝ աստվածների և նախնիների արձանները Բագարան տեղափոխելու մասին, Միհրին, Անահիտին և նախնիներին նվիրված տաճարները մյուս մայրաքաղաքների նրման կարող էին կառուցվել նաև Երվանդաշատում, Տիգրանակերտում և թագավորական պաշտամունքի այլ սրբավայրերում:

Գ. Խ. Սարգսյանը, նորից հենվելով Մովսես Խորենացու հաղորդած տեղեկությունների վրա, գտնում է, որ Հայաստանի աստվածների արձաններն ու կոթողները պետք է նման լինեին Կոմագենի արձաններին ու կոթողներին<sup>99</sup>: Պետք է նման լինեին նաև ծխակատարությունները: Հայաստանում նույնպես թագավորներն էին քրմեր նշանակում<sup>100</sup>, կազմակերպում պաշտամունքը, որն ուներ պետական, պաշտոնական բնույթ: Նախնիների պաշտամունքի հիմնադրումը Հայաստանում հասցվում է Արտաշեսի ժամանակները<sup>101</sup>, իսկ իշխող թագավորին աստվածացնելու մասին մեր տեղեկությունները վերաբերում են Տիգրան 2-րդին և նրա հաջորդներին<sup>102</sup>: Սակայն, ինչպես վերը տեսանք, Հայկական լեռնաշխարհում, ուրարտական շրջանում եղած նախնիների և իշխող թագավորի աստվածացումն ու պաշտպանումը ավանդաբար շարունակվել է նաև հետուրարտական, ինչպես նաև հելլենիստական և ուշ անտիկ շրջանում: Նախնիների և տիրակալի պաշտամունքը տառաժված էր Հին Արևելքի գրեթե բոլոր երկրներում<sup>103</sup>, ուստի Հայաստանում և տեղական կառավարումով հելլենիստական մյուս երկրներում այն ավանդաբար պետք է շարունակվեր, մինչդեռ նախահելլենիստական հունական աշխարհում դա ընդունված չէր:

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքից հետո հունա-մակեդոնական քաղաքական իշխանություն ունեցող հելլենիստական երկրները, որոնք շատ բան յուրացրեցին արևելյան ժողովուրդների մշակույթներից, վերցրեցին նաև թագավորական դիսաստիայի և իշխող թագավորի պաշտամունքը, քանի որ այն անհրաժեշտություն էր Արևելքում կառավարելու համար: Արևելյան ժողովուրդների համար, ինչպես վերը նշեցինք, թագավորը աստվածային ծագում ուներ և աստվածացվում էր, ուստի նոր թագավորը չէր կարող տեղական ժողովրդի համար աստված չլինել կամ մի մասի (մեծ մասի) համար լինել աստված, իսկ հունա-մակեդոնացիների համար՝ սովորական մահկանացու Գա կխաթարեր նրա հեղինակությունը առաջինների (մեծամասնության) աշ-

<sup>96</sup> Տճ՝ ս ժ. Գ. Խաչատրյան, Իրանա-հայկական դիցարանական աղբյուրների շուրջ, էջ 72:

<sup>97</sup> Տճ՝ ս Մովսես Խորենացի, 2-րդ, 65: 2ԺՊ, 1-ին, էջ 851:

<sup>98</sup> Տճ՝ ս 2ԺՊ, 1-ին, էջ 851: Այդ մասին տե՛ս Գ. Ա. Тирация, К вопросу о градоостронтельной структуре и топографии древнего Вагаршапата. ИФЖ, 197, № 2, էջ 84—85, 92—93:

<sup>99</sup> Տճ՝ ս Գ. Խ. Սարգսյան, Եղվ. աշխ., էջ 44:

<sup>100</sup> Տճ՝ ս Մովսես Խորենացի, 2-րդ, 8, 14, 40, 53:

<sup>101</sup> Տճ՝ ս Գ. Խ. Սարգսյան, Եղվ. աշխ., էջ 75—76:

<sup>102</sup> Տճ՝ ս Խույն տեղը, էջ 45—57, 60:

<sup>103</sup> Տճ՝ ս В. Г. Ардзинба, Եղվ. աշխ., էջ 55:

քում: Ահա թե ինչու այն ընդունվեց, լայն տարածում ստացավ և ծաղկում ապրեց այդ երկրներում՝ ապահովելով միասնական մտածողություն և մոտեցում թագավորի նկատմամբ: Այն նոր երանգ ստացավ, համապատասխանեցվեց սվյալ ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններին, որը պահանջում էր միանալ տեղի վերնախավի հետ, որպեսզի ամրապնդվեր ստրկատիրական հասարակարգը և միապետի հեղինակությունը: Այն նպաստելու էր համերաշխություն ձեռք բերելուն և արևելյան ժողովուրդներին հունա-մակեդոնացիների հետ միաձուլելուն:

Աստվածացումը սկսվեց վաղ հելլենիստական շրջանում, երբ Ալեքսանդր Մակեդոնացին եգիպտոսը նվաճելուց հետո գնաց երկրպագելու Ամոն աստծուն և տաճարի քուրմը ողջունեց նրան որպես Ամոնի որդու, իսկ նրա մահից հետո (մ. թ. ա. 324 թ.) նախնիների և տիրակալի պաշտամունքը շարունակվեց Պտղոմյանների, Սելևկյանների, Ատտալյանների կողմից:

### Ж. Д. ХАЧАТРЯН— Урартско-армянские культовые связи. —

Для изучения духовной и материальной культуры древней Армении очень важен вопрос урартских культовых традиций в постурартское время. По письменным источникам известно, что в урартских храмах помимо статуй богов одновременно устанавливались статуи как династических предков, так и действующего царя. Жертвоприношение происходило не только у статуй богов, но и перед царем. При этом участники, в том числе и народ, ели ту же пищу («жертва»), которой кормили богов. Фактически династические предки и царь приравнивались к богам и получали те же почести. Культ династических предков и царя был распространен почти во всех древневосточных государствах; и эта традиция продолжалась в Армении и в других странах эллинского мира с местным управлением. Известно, что в греческом мире в доэллинское время не было этого обычая.

После похода Александра Македонского эллинские государства с греко-македонским политическим правлением переняли многие элементы культуры у народов Востока, в том числе культы династических предков и действующего царя, без которых было трудно управлять на Востоке. Вот почему институт культа династических предков и царя был принят, получил широкое распространение и достиг расцвета в этих странах, обеспечивая единомыслие в отношении к царской персоне. Этот культ получил новый оттенок, приспособляясь к социально-экономическим и политическим условиям данного времени, что было необходимо для объединения с местной правящей верхушкой в целях укрепления рабовладельческого строя и авторитета правителя.